ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 18.06.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ

ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-LO-2020/130

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ

Մասնակից՝ «Հակոբ Բեջանյան» Ա/Ձ

Մասնակցությամբ՝

«Հակոբ Բեջանյան» Ա/Ձ-ի ներկայացուցիչ Ս. Ներսիսյանի, Հ. Բեջանյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ԳԲԿ-ԳՀԾՁԲ-20/4» ծածկագրով գնանշման հարցում, կենցաղային աղբի հավաքագրման ծառայությունների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 20.05.2020թ.-ի թիվ 26/26-1/7439-2020 գրությամբ «Հակոբ Բեջանյան» Ա/Ձ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 15.05.2020թ.-ի թիվ 503 գրության հիման վրա, 20.05.2020թ.-ին «Հակոբ Բեջանյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 20.05.2020թ.-ին:

21.05.2020թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/130 համարի ծածկագիրը և նույն օրը հրապարակվել է www.gnumner.am կայքում:

27.05.2020թ.-ին և 18.06.2020թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 27.05.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 18.06.2020թ.-ին:

2. «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

«Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն 15.05.2020թ.-ի թիվ 503 գրությամբ դիմելով ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնել է հետևյալը.

««Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից «ԳԲԿ-ԳՀԾՁԲ-20/4» ծածկագրով գնանշման հարցման ձևով կազմակերպված գնման ընթացակարգի շրջանակներում Ա/Ձ Հակոբ Բեջանյանը կենցաղային աղբի հավաքագրման նպատակով ներկայացրել է հայտ և տվյալ ընթացակարգի սահմաններում ճանաչվել է ընտրված մասնակից: Այնուհետև Ա/Ձ Հակոբ Բեջանյանը ծանուցվել է պայմանագիր կնքելու նպատակով, սակայն 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրել պայմանագիրը և պատվիրատուին ներկայացրել որակավորման և պայմանագրի ապահովումը և զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ԳԲԿ-ԳՀԾՁԲ-20/4» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Հակոբ Բեջանյան» Ա/Ձ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

Պատվիրատուն 25.05.2020թ.-ի թիվ 514 գրությամբ հայտնել է նաև հետևյալը.

«Ներկայացնում ենք ՀՀ ֆինանսների նախարարության 20.05.2020թ. թիվ 26/26-1/7439-2020 գրությամբ «Հակոբ Բեջանյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգի «Հակոբ Բեջանյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված դիրքորոշման վերաբերյալ «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի պատասխան դիրքորոշումը:

Տեղեկացնում ենք, որ «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից հայտարարված ԳԲԿ-ԳՀԾՁԲ-20/4 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում հաղթող ճանաչված «Հակոբ Բեջանյան» Ա/Ձ-ն՝ պայմանագրի կնքման ծանուցումն ու նախագիծն ուղարկելուց 10 աշխատանքային օր հետո պարտավորվել է մատուցել պայմանագրում նշված ծառայությունը՝ պայմանով, որ պայմանագիրը փոստով ուղարկել է և տեղ կհասնի, սակայն 20 օրացույցային օր հետո նա չի կատարել խոստումը, բայց մենք հաշվի առնելով արտակարգ իրավիճակը խնդրեցին նախորդ կազմակերպությանը շարունակել ծառայությունը մատուցել, որպեսզի աղբը չմնա հիվանդանոցի բակում: Հետագայում այդ ծառայությունը մատուցվեց «Հակոբ Բեջանյան» Ա/Ձ-ի կողմից՝ մի քանի անգամ և այդ ամբողջ ժամանակահատվածում բազմիցս զանգվել է պայմանագիրը ներկայացնելու վերաբերյալ, բայց նրանց կողմից ամեն անգամ անհիմն պատճառաբանություններ են հնչել՝ մի անգամ ուղարկել ենք, բայց գնացել է Նոյեմբերյան տնօրենի հասցեով, մի անգամ թե փոստով նորից ենք ուղարկել: Սակայն մեր աշխատակիցների կողմից ճշտվել է, որ «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի հասցեով ոչ մի նամակ չկա տվյալ Ա/Ձ-ի կողմից նշված ժամանակահատվածում: Պայամանգիրը չստանալով՝ նորից տեղեկացրեցինք, որ այդպես էլ փոստով տեղ չի հասել պայմանագիրը: Այդ ժամանակ «Հակոբ Բեջանյան» Ա/Ձ-ն հրաժարվեց պայամանգիր կնքելուց և ծառայություն մատուցելուց, ինչի պատճառով ժամկետների խախտումով ձեռնակվեց սույն միջոցառումները:

«Հակոբ Բեջանյան» Ա/Ձ-ն իր դիրքորոշման մեջ ասում է, որ մենք երկում տիրող իրավիճակը պատճառաբանելով կատարել ենք ժամկետների խախտումներ, մյուս տեղում ասում է, որ արտակարգ իրավիճակից ելնելով չի կարողացել ազատ տեղաշարժվել, և

հազիվ մի օր բերել հասցրել է բուժհաստատության հասցեով: Իսկ ով է ասել, որ պայմանագիրը պետք էր բերել հասցնել պատվիրատուի հասցեով, երբ գոյություն ուներ էլ. ստորագրություն և փոստ:

Հարկ ենք համարում տեղեկացնել, որ «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի բժշկական թափոնները հավաքագրվում, տեղափոխվում և ոչնչացվում են «էկոլոգիա Վ.Կ. Հ.» ՍՊԸ-ի կողմից և նման անլուրջ հայտարարություն, թե աղբի մեջ կան վարակի տարածում հանդիսացող ներարկիչներ և բամբակ, ճիշտ չէ:»:

3. <u>«Հակոբ Բեջանյան» Ա/Ձ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 21.05.2020թ.-ին գրությամբ դիմել է «Հակոբ Բեջանյան» Ա/Ձ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 20.05.2020թ.-ի թիվ 26/26-1/7439-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է 27.05.2020թ.-ին հրավիրված նիստին:

Մասնակիցը 22.05.2020թ.-ին ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Տեղեկանալով, ՀՀ ֆինանսների նախարարության 20.05.2020թ.-ի թիվ 26/26-1/7439-2020 գրությամբ «Հակոբ Բեջանյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնած ընթացակարգի մասին Հակոբ Բեջանյան Ա/Ձ-ն հանդես է գալիս հետևյալ դիրքորոշմամբ և կարծիքով, որոնք խմբավորված են ստորև ներկայացված կետերում.

1. «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից ՀՀ Ֆինանսների նախարարության 20.05.2020թ. թիվ 26/26-1/7439-2020 գրությամբ «Հակոբ Բեջանյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով կազմված գրությունը ուղարկվել է օրենքով սահմանված ժամկետների ակնհայտ խախտմամբ: Գրության վերջին նախադասությամբ հեղինակը ներողամտություն է հայցում ժամկետների խախտման վերաբերյալ՝ պատճառաբանելով արտակարգ իրավիճակի առկայությունը:

Արտակարգ իրավիճակի ամբողջ ընթացքում գնման գործընթացները և դրանցից բխող գործառույթներն ու ընթացակարգերը չեն կասեցվել, ուստի ժամկետների պահպանումը անհրաժեշտ էր:

Ցանկանում ենք շեշտել, որ արտակարգ իրավիճակը ՀՀ-ում մտցվել է սույն թվականի մարտի 16-ից, իսկ «ԳԲԿ-ԳՀԾՁԲ-20/4» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու ծանուցումը մենք ստացել ենք մարտի 24-ին՝ սահմանված 10 աշխատանքային օրը ակնհայտորեն ընկնում է արտակարգ իրավիճակի ժամանակահատվածում, երբ սահմանափակված էր տեղաշարժը:

Եզրակացնելով կարելի է ասել որ «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն ներողամտություն է հայցում ժամկետների խախտման համար և միևնույն ժամանակ ցանկանում է մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ նույն պատճառը հաշվի չառնելով:

2. «ԳԲԿ-ԳՀԾՁԲ-20/4» ծածկագրով գնման ընթացակարգի «տեխնիկական բնութագրում» հիշատակվում է միայն կենցաղային աղբի մասին: Տեղեկացնում ենք Ձեզ, որ «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից կատարվել է ակնհայտ խախտում: Կենցաղային աղբի հետ միասին առկա են նաև բժշկական աղբի տարատեսակ մնացորդներ (օգտագործված ներարկիչներ, վարակի տարածման հիմք հանդիսացող բամբակի մնացորդներ և այլն):

3. Այնուամենայնիվ, արտակարգ իրավիճակով պայմանավորված սահմանափակումների ընթացքում՝ ազատ տեղաշարժի վերականգնման օրը, մեր կողմից միակողմանի ստորագրված պայմանագիրը՝ պայմանագրի և որակավորման ապահովումների հետ միասին հասցվել են «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ, սակայն հեռախոսազանգերից ծանոթ աշխատակիցներից ոչ ոք հեռախոսազանգերին չի պատասխանել, իսկ երկար սպասելուց հետո տնօրենի կողմից ընդունելության չենք արժանացել: Ոմն մեկը, չներկայանալով, տեղեկացրեց, որ նմանատիպ հարցերով զբաղվող աշխատակիցներից ոչ ոք ներկա չէ, հիվանդանոցում վտանգավոր է, իսկ տնօրենը հրաժարվում է ընդունել մեզ:

4. Պայմանագիր կնքելու մասին ծանուցումը սահմանված ժամկետներում ստանալով, տեղեկացնում ենք նաև, որ «armeps.am» էլեկտրոնային համակարգի միջոցով «շնորհումը» ստացել ենք սահմանված ժամկետների խախտմամբ:»:

Մասնակիցը և վերջինիս ներկայացուցիչը, ներկայանալով 27.05.2020թ.-ին հրավիրված նիստին, բանավոր հայտնել են նաև, որ արտակարգ իրավիճակով

պայմանավորված սահմանափակումների ընթացքում՝ ազատ տեղաշարժի վերականգնման օրը, Մասնակիցը անձամբ գնացել է «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ՝ միակողմանի ստորագրված պայմանագիրը՝ պայմանագրի և որակավորման ապահովումների հետ միասին, սակայն տեղում տեսնելով, որ Կենցաղային աղբի հետ միասին առկա են նաև բժշկական աղբի տարատեսակ մնացորդներ, որոշել են պայմանագիրը չհանձնել պատվիրատուին, ինչպես նաև պայմանագրի ստորագրված տարբերակը չեն ուղարկել հետագայում նույն պատճառաբանությամբ:

4. <u>ՍՑ-LO-2020/130 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

«Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից կենցաղային աղբի հավաքագրման ծառայությունների ձեռքբերման նպատակով 11.03.2020թ.-ին հայտարարվել է «ԳԲԿ-ԳՀԾՁԲ-20/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Հակոբ Բեջանյան» Ա/Ձ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 19.03.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է «Հակոբ Բեջանյան» Ա/Ձ-ին ճանաչել ընտրված /հաղթող/ մասնակից վերջինիս ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

20.03.2020թ.-ին պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում Հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն:

Հանձնաժողովի 14.05.2020թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովն արձանագրել է, որ «Հակոբ Բեջանյան» Ա/Ձ-ն 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրել պայմանագիրը և Պատվիրատուին չի ներկայացրել որակավորման և պայմանագրի ապահովումները, ինչի արդյունքում զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 20.05.2020թ.-ի թիվ 26/26-1/7439-2020 գրությամբ «Հակոբ Բեջանյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ (10.10.2019թ.-ի թիվ 1422-Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցին

պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը:

Նույն կետի 13-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Վերոնշյալ իրավակարգավորումների համադրված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը եզրահանգում է, որ ընտրված մասնակիցը, հանձնաժողովի քարտուղարի կողմից էլեկտրոնային եղանակով ստանալով պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը, պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուին ներկայացնել իր կողմից հաստատված պայմանագրի նախագիծն ու պայմանագրի կատարման ապահովումը:

Ընդ որում, եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ վերջինիս գործողությունները (անգործությունը) գնահատվում են, որպես պայմանագիր կնքելուց ընտրված մասնակցի կողմից հրաժարում:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով, քանի որ իր գործողություններով (անգործությամբ) պատվիրատուին չներկայացնելով պայմանագրի օրինակը և/կամ ապահովումը զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից:

Սույն գործի փաստերի հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից կենցաղային աղբի հավաքագրման ծառայությունների ձեռքբերման նպատակով 11.03.2020թ.-ին հայտարարված «ԳԲԿ-ԳՀԾՁԲ-20/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին հայտ ներկայացրած «Հակոբ Բեջանյան» Ա/Ձ-ն Հանձնաժողովի 19.03.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության հիման վրա ճանաչվել ընտրված /հաղթող/ մասնակից և վերջինիս ներկայացվել պայմանագիր կնքելու առաջարկ:

Սակայն «Հակոբ Բեջանյան» Ա/Ձ-ն 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրել պայմանագիրը և Պատվիրատուին չի ներկայացրել որակավորման և պայմանագրի ապահովումները, ինչի արդյունքում զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման, դրանք համադրելով Մասնակցի ներկայացրած բանավոր և գրավոր դիրքորոշման հանգամանքներին, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, «Հակոբ Բեջանյան» Ա/Ձ-ն, որպես ընտրված /հաղթող/ մասնակից, հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չներկայացնելով պայմանագիրը, հրաժարվել է պայմանագիր կնքելուց: Ընդ որում, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ պայմանագիր կնքելուց հրաժարվելու փաստը ընդունել են նաև Մասնակիցը և վերջինիս ներկայացուցիչը, ովքեր պայմանագիր կնքելուց հրաժարվելու հանգամանք վկայակոչել են այն, որ Կենցաղային աղբի հետ միասին առկա են եղել նաև թիվ «ԳԲԿ-ԳՀԾՁԲ-20/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի տեխնիկական բնութագրով չնախատեսված բժշկական աղբ, որի վերաբերյալ գործի քննության ընթացքում Մասնակիցը որևէ վերաբերելի կամ թույլատրելի ապացույց Բողոքներ քննող անձին չներկայացրեց:

Ուստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի դրույթները, Մասնակցին պետք է ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում անդրադառնալ նաև, Մասնակցի կողմից ներկայացված դիրքորոշման առարկությունների հիմքում դրված Հանձնաժողովի կողմից Կարգի 45-րդ կետի խախտման փաստին և արձանագրում, որ Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընթացակարգ նախաձեռնելու համար անհրաժեշտ է Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերի առկայությունը, ինչպես նկարագրված է Կարգի 45-րդ կետի դրույթով: Դրանք են՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Վերոնշյալներով պայմանավորված, Բողոքներ քննող անձը փաստում է, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերի ի հայտ գալու փաստը պետք է արձանագրվի կամ ամրագրվի Հանձնաժողովի կողմից կայացված համապատասխան ակտով (արձանագրություն, որոշում, հայտարարարություն):

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Հանձնաժողովի կողմից պահպանվել են Կարգի 45-րդ կետի դրույթներով սահմանված ժամկետները: Այն է՝ Հանձնաժողովի 14.05.2020թ.-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ ամրագրվել է Մասնակցի կողմից պայմանագիր կնքելուց հրաժարվելու հանգամանքը, իսկ ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 15.05.2020թ.-ի թիվ 503 գրության հիման վրա, «Հակոբ Բեջանյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով 20.05.2020թ.-ին նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Հակոբ Բեջանյան» Ա/Ձ-ն, որպես ընտրված /հաղթող/ մասնակից, հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չներկայացնելով պայմանագիրը, հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 20.05.2020թ.-ի թիվ 26/26-1/7439-2020 գրությամբ «Հակոբ Բեջանյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/130 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Հակոբ Բեջանյան» Ա/Ձ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**